Տարեկան հաշվետվություն 2022

Կազմակերպության մասին

«Իրազեկ քաղաքացիների միավորում» խորհրդատվական հասարակական կազմակերպության նպատակն է հասարակության իրազեկումը և հանրության տեղեկացվածության մակարդակի բարձրացումը, հանրության մասնակցության խթանումը հանրային նշանակություն ունեցող ոլորտներում և որոշումների կայացման գործընթացում, ինչպես նաև ժողովրդավարական արժեքների ու բարեփոխումների առաջմղումը: Մեր համոզմամբ՝ պետական և հանրային նշանակություն ունեցող ոլորտներում հանրության տեղեկացվածության մակարդակի բարձրացումը ցանկացած ժողովրդավարական հասարակության հիմնական և անբաժանելի բաղադրիչն է:

«Իրազեկ քաղաքացիների միավորման» հետազոտություններն ու հրապարակումները վերաբերում են արտաքին քաղաքականությանն ու դրան առնչվող հարցերին, ժողովրդավարական արժեքներին, տնտեսությանը, անվտանգության ոլորտին, ընտրություններին, բարեփոխումներին, ինչպես նաև քաղաքացիների իրավունքներին:

Կազմակերպությունն աշխատանքներ է ձեռնարկում՝ ուղղված Հայաստանում լրագրողական դաշտի ունակությունների հզորացմանը, ինչպես նաև իրականացնում է լրատվական գործունեություն՝ ապատեղեկատվության դեմ պայքարող «Փաստերի ստուգման հարթակի» միջոցով:

«Իրազեկ քաղաքացիների միավորումն» իր գործընկերների հետ միասին ակտիվորեն ներգրավված է Հայաստանում ընտրությունների որակի բարձրացման գործընթացին՝ թե՛ դիտորդական առաքելության և թե՛ դրան նախորդող գործընթացների վրա ազդեցության միջոցով:

Կազմակերպությունն իր ակտիվ մասնակցությունն է ունենում մի շարք ժողովրդավարական բարեփոխումների առաջմղմանը, հանրության շրջանում դրանց պահանջի ձևավորմանը և փաստաթղթերի նախագծմանը:

Բովանդակություն

- Անձնակազմ
- Գործընկերներ
- Գործունեություն
- Ֆինանսավորում

Աշխատակիցներ

Մուշեղյան Աշխեն
Գործադիր տնօրեն

Իոաննիսյան Դանիել
Ծրագրերի համակարգող

Գորոյան Քրիստինե
Թարգմանիչ

Հարությունյան Շուշան
Թարգմանիչ

Պետրոսյան Փիրուզա
Ծրագրի օգնական /
ֆոնդահայթայթման մասնագետ

Կարապետյան Փայլակ
Հաշվապահ

Ղազարյան Սևադա
Լրագրող

Գրիգորյան Խորեն
Վիդեոմոնտաժող / օպերատոր

Ղուկասյան Վահե
Խմբագիր

Մանասյան Նանե
Լրագրող/ հաղորդավար

Լազարյան Նելլի
Լրագրող

Ոսկանյան Լուսինե
Լրագրող

Մարտիրյան Մանե
Թվային մարքեթինգի
մասնագետ

Աղաբեկյան Վաղարշ
Իրավապահ համակարգի
փորձագետ

Ավետիսյան Անի
Լրագրող

Սերգոյան Արտաշես
Հետազոտող /
բարեփոխումների խորհրդատու

Ստեփանյան Շուշան
Լրագրող

Գասոյան Գայանե
Սոցիալական մեդիայի
կոնտենտի մասնագետ

Թարոյան Միեր
Մեդիա մոնիթորինգի
մասնագետ

Ղազարյան Լիլիթ
Գործադիր օգնական

Գրիգորյան Տիգրան
Ծրագրի պատասխանատու

Մարտիրոսյան Նարեկ
Լրագրող

Կարապետյան Հակոբ
Գլխավոր խմբագիր

Ավագիմյան Ռուզաննա
Ծրագրի պատասխանատու

Գործընկերներ

The U.S. Embassy in Armenia

Freedom House

NED

National Endowment for Democracy

Supporting freedom around the world

International Republican Institute

IRI

advancing democracy worldwide

OPEN SOCIETY FOUNDATIONS

oxYGen

EMPOWERING WOMEN AND YOUTH



«Փաստերի ստուգման հարթակի» գործունեությունը»

2022 թվականին «Փաստերիստուգման հարթակը» շարունակեց իր գործունեությունը՝ պայքարելով ապատեղեկատվության, կեղծ ու մանիպուլյատիվ տեղեկությունների դեմ:
Տարին նշանավորվեց Ուկրաինայի դեմ Ռուսաստանի ծավալած պատերազմի պայմաններում առկա տեղեկատվական միջավայրով: FIP.am-ը պատերազմի սանձազերծումից ի վեր հանդես է եկել մի շարք հրապարակումներով և պատերազմի այս կամ այն դրվագի համատեքստը պարզաբանող նյութերով: Մի շարք հրապարակումներ վերաբերել են հիմնականում պատերազմի ընթացքում ռուսաստանյան քարոզչական թեզերի բացահայտմանը, ինչպես նաև՝ ուկրաինական մամուլում երբեմն հանդիպող ապատեղեկատվությանը: Կատարվել են նաև պատերազմի համատեքստում հարավկովկասյան տարածաշրջանին վերաբերող ապատեղեկատվության բացահայտումներ, մասնավորապես, Հարթակը մի շարք հոդվածներ է հրապարակել պատերազմի ընթացքում ռուսական և ադրբեջանական քարոզչամիջոցների՝ հայաստանյան լսարանին ուղղված մանիպուլյատիվ կամ կեղծ տեղեկատվության վերաբերյալ: Տարվա ընթացում FIP.am-ը հրապարակումներ է պատրաստել նաև Լեռնային Ղարաբաղի շուրջ ծավալվող իրադարձությունների համատեքստում կեղծ և մանիպուլյատիվ տեղեկատվության վերաբերյալ:

«Փաստերի ստուգման հարթակը» շարունակել է գործել բազմակողմանիության և անաչառության իր որդեգրած սկզբունքի շրջանակներում՝ հրապարակումների օբյեկտիվի տակ պահելով ինչպես Հայաստանի իշխանության, այնպես էլ ընդդիմության ներկայացուցիչների հրապարակային հայտարարությունները և կոռուպցիոն ռիսկ պարունակող գործունեությունը:

Բացի փաստերի ստուգումից, Հարթակը շարունակել է հետաքննական լրագրության իր գործունեությունը՝ հրապարակելով տասնյակ հետաքննություններ, որոնք հանրության շրջանում լայն քննարկման առարկա են դարձել:

Հարթակը փորձել է մեծացնել նյութերի հասանելիությունը՝ կատարված աշխատանքը ներկայացնելով տարբեր ձևաչափերով և խորագրերով: Մասնավորապես, հրապարակված հոդվածների մոտիվներով պատրաստվել են վիդեոռեպորտաժներ, հանրային կարծիքի հարցումներ (վոքս-փոփ), բացատրական տեսանյութեր (էքսփլեյներներ), թողարկվել է FIP-փոդքասթը, որի ընթացքում թիմի անդամները ներկայացրել են այս կամ այն հոդվածի պատրաստման մանրամասները, թողարկվել է ամենշաբաթյա «Փաստաչափ» ամփոփիչ հաղորդումը, և այլն: Տարվա սկզբից *#InterCheck* խորագրի ներքո ամեն ուրբաթ ներկայացվել է տարածաշրջանի և աշխարհի փաստեր ստուգողների աշխատանքի դայջեսթը:

FIP.am-ի հրապարակումների հիման վրա հարուցվել են քրեական գործեր, պաշտոնյաների նկատմամբ կիրառվել են վարչական տույժեր, որոշ պաշտոնյաներ հանդես են եկել պարզաբանումներով:

Ավելացել է հարթակի ճանաչելիությունը հանրության շրջանում, ինչի մասին վկայում են օգտատերերի կողմից պարբերաբար ստացվող նամակները՝ այս կամ այն նյութի վերաբերյալ իրենց կարծիքի արտահայտմամբ, ինչպես նաև փաստերը ստուգելու կամ տեղեկատվությունը ճշտելու առաջարկներով:

«Փաստերի ստուգման հարթակի» բազմաթիվ հրապարակումներ արտատպվել և վերահրապարակվել են տարբեր լրատվական կայքերի կողմից, մի շարք պաշտոնյաներ տարբեր ամբիոններից իրենց ելույթներում հղում են արել Հարթակի հրապարակած նյութերին, իսկ թիմի անդամները բազմիցս մասնակցել են տարբեր հաղորդումների և ռեպորտաժների, հանրային քննարկումների, հարցազրույցների և այլ ձևաչափերով իրենց կատարած աշխատանքի վերաբերյալ մեկնաբանություններ տվել տարբեր լրատվամիջոցների:

Հակազդեցություն COVID-19 համավարակին



«Փաստերի ստուգման հարթակը» 2022-ի առաջին ամիսներին շարունակել է անդրադառնալ համավարակի ընթացքում տարածում գտած ապատեղեկատվությանն ու միֆերին, ինչպես նաև պարզաբանող հոդվածներ է հրապարակել վարակի տարատեսակ դրսևորումների վերաբերյալ: Այս նպատակով «Լրագրողներ հանուն ապագայի» ՀԿ-ի, «Սիվիլիթաս» հիմնադրամի, Հանրային լրագրություն ակումբի, Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի և «Իրազեկ քաղաքացիների միավորման» միջև օգոստոսի 25-ին ստորագրվել է COVID-19-ի հանրային հաղորդակցությանն ուղղված փոխըմբռնման հուշագիրը, որը թույլ է տվել ավելի ակտիվ կերպով հակազդել Հայաստանում COVID-19-ի մասին ապատեղեկատվության տարածմանը և հավաստի տեղեկատվություն հաղորդել պատվաստումային գործընթացի վերաբերյալ:



Ինտերակտիվ քարտեզ

«Իրազեկ քաղաքացիների միավորումը», նպատակ ունենալով խթանել Հայաստանի արտաքին քաղաքականության լուսաբանումն ու հանրության շրջանում երկրի արտաքին քաղաքականության վերաբերյալ իրազեկվածության բարձրացումը, պատրաստել է հատուկ ինտերակտիվ քարտեզ:



Արտաքին քաղաքականության ինտերակտիվ քարտեզը ներկայացնում է Հայաստանի արտաքին հարաբերությունները՝ աշխարհի բոլոր երկրների հետ, մասնավորապես դիվանագիտական և տնտեսական: Բացի այդ քարտեզը հնարավորություն է ընձեռում տեղեկատվություն ստանալ երկրների բնակչության, տնտեսության և ազատության ինդեքսի մասին:

Հանրահավաքների մասնակիցների հաշվարկ

2021 թ.-ի արտահերթ խորհրդարանական ընտրություններից հետո Հայաստանում սկիզբ առած ներքաղաքական շարժումները շարունակվեցին նաև 2022 թվականի ընթացքում: Մասնավորապես, արտահերթ խորհրդարանական ընտրություններում իշխանության հաղթանակից հետո ընդդիմադիր «Դիմադրություն» շարժման կողմից պարբերաբար կազմակերպվում էին հանրահավաքներ: «Իրազեկ քաղաքացիների միավորումն» այդ ընթացքում իրականացրել է հանրահավաքների մասնակիցների հաշվարկ՝ կանխելով հավաքների մասնակիցների քանակի շուրջ մանիպուլյացիաներն ու շահարկումները:

Սեմինար-քննարկումներ/լրագրողների ուսուցում և ոչ միայն

Տարին սկսվեց «Արտաքին քաղաքականություն և լուսաբանում» շարքի «Խաղաղության գործընթացի խոչընդոտները և փոփոխությունները տարածաշրջանում» խորագրով սեմինար-քննարկմամբ, որի ընթացքում քննարկվեցին Լաչինի միջանցքի բացումն ու խաղաղության պայմանագրի կնքման շուրջ բանակցությունները՝ բաց մրցույթով ընտրված շուրջ 27 լրագրողների և կարծիքի առաջատարների համար:

Ապրիլին Ծաղկաձորում տեղի ունեցավ կլոր սեղան-քննարկում «Բարեփոխումներն ու ապատեղեկատվությունը» թեմայով, որին մասնակցեցին քսանից ավելի թվային հեղինակություններ ու կարծիքի առաջատարներ: Միջոցառումը կազմակերպվել էր «Իրազեկ քաղաքացիների միավորում» ՀԿ-ի կողմից՝ Freedom House կազմակերպության աջակցությամբ: Միջոցառման ընթացքում տարբեր ոլորտների պատասխանատուներ հնարավորություն ստացան մասնակիցներին ներկայացնելու բարեփոխումների գործընթացում առկա մոտեցումներն ու բարեփոխումների իրականացման ընթացքը:

Արտաքին քաղաքական զարգացումներին նվիրված «Արտաքին քաղաքականություն և լուսաբանում» ավանդական շարքի հերթական՝ 13-րդ սեմինար-քննարկումը տեղի ունեցավ հունիսի 10-12-ին Ծաղկաձորում՝ «Տարածաշրջանի նոր մարտահրավերները» խորագրի ներքո: Միջոցառմանը զեկույցներով հանդես եկան և լսարանի հետ քննարկումներ ծավալեցին ՀՀ արտաքին գործերի նախարարության, ոլորտի այլ ներկայացուցիչներ և փորձագետներ:

Ընթացիկ բարեփոխումների մասին հանրային իրազեկվածության բարձրացման շրջանակներում շարունակել ենք բարեփոխումների մասին քննարկումները: Հերթականը կայացավ նոյեմբերին՝ նվիրված ոստիկանության բարեփոխումներին, ՆԳՆ և ազգային գվարդիայի ստեղծմանը:

Հանրային քննարկումներ

Սկսած փետրվարից՝ «Իրազեկ քաղաքացիների միավորումը» հանրային քննարկումներ է կազմակերպել Գավառի պետական համալսարանում ու Մարտունու պետական բժշկական քոլեջում՝ «Պարեկային ծառայության ներդրումը ՀՀ մարզերում» թեմայով, որի ընթացքում ուսանողներին ներկայացվել է ոստիկանության բարեփոխումների ընթացքը:

Ամռանը տեղի ունեցան մի քանի հանրային քննարկումներ՝ նվիրված արտաքին քաղաքականությանը և իրականացվող բարեփոխումներին: Հունիսին Արևելյան գործընկերության քաղաքացիական հասարակության ֆորումի Հայաստանի ազգային պլատֆորմի հետ միասին կազմակերպվել է երկու միջոցառում՝ նվիրված արտաքին քաղաքականությանը: Մասնավորապես, հունիսի 22-ին կազմակերպվել էր կլոր սեղան-քննարկում՝ «Հայաստանի արտաքին քաղաքական մոտեցումները և անվտանգային սպառնալիքները. Զինված ուժերի բարեփոխումը» խորագրով, իսկ հունիսի 29-ին՝ հանրային քննարկում «ՀՀ առջև ծառացած արտաքին քաղաքական մարտահրավերների» թեմայով:

Մարզերում Պարեկային ծառայության ներդրմանը զուգահեռ՝ հոկտեմբերին ուսանողների հետ կազմակերպվեցին ոստիկանական բարեփոխումների մասին քննարկումներ նաև Վայոց Ձորի մարզի Եղեգնաձոր և Վայք քաղաքներում:

Տարեվերջին՝ Հայաստանում սահմանադրական բարեփոխումներին ընդառաջ, Արևելյան գործընկերության քաղաքացիական հասարակության ֆորումի Հայաստանի ազգային պլատֆորմի հետ անցկացվեց «Նախագահի սահմանադրական կարգավիճակը խորհրդարանական հանրապետությունում» թեմայով հանրային քննարկումը:

Ժողովրդավարության հայկական ֆորում

Մայիսի 20-ին Freedom House կազմակերպության և «Իրազեկ քաղաքացիների միավորում» ՀԿ-ի նախաձեռնությամբ Երևանում տեղի ունեցավ տարվա ամենամեծ միջոցառումը՝ «Ժողովրդավարության հայկական ֆորումը», որը նպատակ էր հետապնդում մեկտեղել Հայաստանում ժողովրդավարության խթանմամբ շահագրգիռ բոլոր կողմերին՝ քննարկելու բարեփոխումների ընթացքն ու մարտահրավերները:

Միջոցառումը հատուկ ողջույնի խոսքով բացեց ՀՀ վարչապետը: Ողջույնի խոսքով հանդես եկան նաև ՀՀ-ում ԵՄ պատվիրակության ղեկավար, դեսպան Անդրեա Վիկտորինը, Եվրոպայում և Եվրասիայում Freedom House-ի ծրագրերի ղեկավար Մարկ Բեհրենդտը:

Այնուհետև պանելային քննարկումների ֆորմատով քննարկումներ անցկացվեցին Հայաստանում ժողովրդավարական բարեփոխումների ընթացքի, ժողովրդավարության կոնսոլիդացման և մարդու իրավունքների ջատագովության վերաբերյալ, ինչպես նաև ապատեղեկատվությանն ու մեդիային առնչվող թեմաներով:

Ֆորումին ներկա էին օրենսդիր ու դատական իշխանությունների ամենաբարձր ներկայացուցիչներ, դեսպաններ, միջազգային իրավապաշտպան ու հայաստանյան քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Freedom House-ը և «Իրազեկ քաղաքացիների միավորումը» նախատեսում են Ժողովրդավարության հայկական ֆորումն անցկացնել ամեն տարի:

Ընտրությունների մշտադիտարկում

2022 թվականի ապրիլի 3-ին կայացած Հունգարիայի խորհրդարանական ընտրություններին «Իրազեկ քաղաքացիների միավորումն» իրականացրել է դիտորդական առաքելություն՝ երկու շրջիկ խմբերի կազմով: Առաքելության նպատակն էր՝ ուսումնասիրել քվեարկության օրվա ընթացքում Հայաստանում և Հունգարիայում ընտրական գործընթացների տարբերությունները:
ԻՔՄ-ն մի շարք հանդիպումներ է ունեցել «Անկախ դիտորդ» դաշինքի գործընկեր կազմակերպությունների հետ, կայացրել որոշումներ, այդ թվում՝ դիտորդական առաքելության մեթոդաբանության հնարավոր փոփոխության վերաբերյալ (անցում կատարել հիմնականում շրջիկ դիտորդության):

Գործընկեր կազմակերպությունների հետ ԻՔՄ-ն նաև հանդես է եկել «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի թեկնածուի կողմից խախտումներ կատարելու և ԿԸՀ-ի կուսակցականացման վերաբերյալ հայտարարությամբ: Բացի դա, ԻՔՄ-ն հանդես է եկել նաև Վանաձորի տեղական ինքնակառավարման մարմիններում ստեղծված իրավիճակի վերաբերյալ հայտարարությամբ:

Կազմակերպությունը երկարաժամկետ և կարճաժամկետ դիտորդական առաքելություն է իրականացրել սեպտեմբերի 25-ի ՏԻՄ ընտրությունների ժամանակ:

Բարեփոխումներ

Ոստիկանության

Կազմակերպությունն ակտիվ մասնակցություն է ունեցել ՀՀ ոստիկանության բարեփոխումների ռազմավարության և դրանից բխող՝ 2020-2022 թթ. ծրագրի մշակման գործում: Մասնավորապես, Դանիել Իոաննիսյանը շարունակել է ներգրավված լինել Ոստիկանության բարեփոխումները համակարգող խորհրդի կազմում, որը նախագահում է վարչապետը:

Կազմակերպությունը ներգրավված է նաև ոստիկանության բարեփոխումների աշխատանքային խմբում, որը ղեկավարում է արդարադատության փոխնախարարը:

2022 թ.-ի ընթացքում կազմակերպությունը ներգրավված է եղել Պարեկային ծառայությունում պաշտոնի նշանակվելու նպատակով ուսուցման ընդունելության և հարցազրույցների հանձնաժողովներում:

Կազմակերպության կողմից մշտադիտարկման շրջանակներում այցեր են կազմակերպվել Պարեկային ծառայություն և ոստիկանության կրթահամալիր՝ ինչպես միայն կազմակերպության անդամների մասնակցությամբ, այնպես էլ բարձրաստիճաններ պաշտոնյաների մասնակցությամբ խնդիրները տեղում հատկորոշելու և առավել առարկայական լուծումներ գտնելու նպատակով:

Կազմակերպությունը նաև հայտարարություններով է հանդես եկել օգոստոսի 24-ին ոստիկանության ապօրինի գործողությունների վերաբերյալ և միացել է ոստիկանապետի պաշտոնանկության պահանջին:

Սահմանադրական

Սահմանադրական բարեփոխումների հանձնաժողովը, որում որպես քաղաքացիական հասարակության ներկայացուցիչ ներգրավված էր նաև ԻՔՄ ծրագրերի համակարգող Դանիել Իոաննիսյանը, փաստացի դադարեցրել էր իր գործունեությունը դեռ 2020 թ.-ին՝ պայմանավորված Արցախյան պատերազմով: 2021 թ.-ին այն նույնպես չէր վերսկսել իր աշխատանքները: Սակայն 2021 թ.-ի վերջին սկսվեց նոր Սահմանադրական բարեփոխումների խորհրդի ձևավորման գործընթացը, ինչի վերաբերյալ Կազմակերպությունը ներկայացրեց 7 կետից բաղկացած առաջարկությունների փաթեթ, որը ընդունվեց: Առաջարկները վերաբերում էին խորհրդի և հանձնաժողովի դերերին, մասնավորապես առ այն, որ սահմանադրական բարեփոխումների բովանդակության գեներացիան պետք է իրականացնի խորհուրդ և խորհուրդն էլ պետք է ապահովի պրոցեսին հանրային մասնակցայնությունը:

Հանձնաժողովը պետք է իրավաբանական աջակցությամբ սպասարկի խորհրդի պատվերները, ձևակերպի խորհրդի սահմանած հայեցակարգային ուղղություններն ու խորհրդի հաստատած հայեցակարգի հիման վրա պատրաստի սահմանադրական փոփոխությունների նախագիծը (Սահմանադրության նոր շարադրանքի նախագիծը):

2022 թ.-ին ձևավորվեց և իր աշխատանքները սկսեց սահմանադրական բարեփոխումների խորհուրդը, որում ներկայացված են երեք հասարակական կազմակերպության անդամներ, այդ թվում՝ Դանիել Իոաննիսյանն ԻՔՄ-ից:

Կազմակերպությունը խորհրդի աշխատանքների շրջանակներում ներկայացնում է իր դիտարկումները նոր սահմանադրության տեսքի և բովանդակության վերաբերյալ, ներկայացնում է հայեցակարգային առաջարկություններ, ինչպես նաև առարկություններ՝ ներկայացված առաջարկությունների վերաբերյալ:

Ընտրական

«Իրազեկ քաղաքացիների միավորումը» հանդես է եկել ընտրական իրավունքի մասին առաջարկներով: Մասնավորապես, կազմակերպությունը մասնակցել է ԱԺ-ում հրավիրված խորհրդարանական լսումներին, որտեղ քննարկվել է «ՀՀ ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և կից ներկայացված օրենքների նախագծերի փաթեթը: Լսումների ժամանակ կազմակերպությունն իր դիրքորոշումն է հայտնել փաթեթի և այնտեղ տեղ գտած մի շարք անընդունելի դրույթների վերաբերյալ :

Կազմակերպությունը գործընկեր կազմակերպությունների հետ համատեղ այս խնդիրների հետ կապված նաև հայտարարություն է տարածել:

Հակակոռուպցիոն

«Իրազեկ քաղաքացիների միավորումը» շարունակել է աշխատանքը Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդում, որում ներգրավված է 2019 թ.-ից: Բացի այդ, կազմակերպությունը Հակակոռուպցիոն կոմիտեի ստեղծման պահից ներկայացված է եղել ընդունելության մրցույթային հանձնաժողովում և 2022 թ.-ին ևս՝ որպես հանձնաժողովի անդամ, ներկայացված է եղել այս մարմնի քննիչների և օպեր-լիազորների ընտրության գործընթացին:

Թիմի իրավական հարցերով ներկայացուցիչը նաև հանդես է եկել որպես ազգային փորձագետ Բարձրագույն դատական խորհրդի հակակոռուպցիոն առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների դատավորների ընտրության գործընթացում՝ ստուգելով թեկնածուների բարեվարքության եզրակացությունները:

Եկամուտների և ծախսերի հաշվետվություն

N	2022թ. ֆինանսական միջոցները՝ ըստ դոնորների		USD
1	Ազատության տուն, Վաշինգտոն	*Բալանս*	10674
		Եկամուտ	70087
2	Միջազգային հանրապետական ինստիտուտ, Վաշինգտոն	*Բալանս*	658
		Եկամուտ	3982
3	Ժողովրդավարության ազգային հիմնադրամ, Վաշինգտոն	*Բալանս*	23186
		Եկամուտ	191750
4	Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստան, Երևան	*Բալանս*	13330
		Եկամուտ	111206
5	Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստան, Երևան	*Բալանս*	0
		Եկամուտ	11604
6	ՕՔՍԵՋԵՆ հիմնադրամ, Երևան	*Բալանս*	2731
		Եկամուտ	6547
7	Պրահայի քաղաքացիական հասարակության կենտրոն, Պրահա	*Բալանս*	3120
		Եկամուտ	20340
8	Հայաստանում ԱՄՆ դեսպանություն, Երևան	*Բալանս*	29855
		Եկամուտ	32241
			531311

N	2022թ. ծախսերը՝ ըստ իրականացված ծրագրերի		USD
1	Հայաստանում ժողովրդավարական մշակույթի առաջմղում	*Ծախսեր*	**69716**
2	Հակազդեցություն COVID-19-ին առնչվող ապատեղեկատվությանը	*Ծախսեր*	**4640**
3	Արտաքին քաղաքականության և ժողովրդավարական բարեփոխումների շուրջ հանրային քննարկումների խթանում	*Ծախսեր*	**182831**
4	Հանրային նշանակության հարցերի փաստահենք ընկալման զարգացում՝ ապատեղեկատվություններին և մանիպուլյացիաներին հակազդելու միջոցով	*Ծախսեր*	**72714**
5	Ժողովրդավարության խթանումը երիտասարդության շրջանում՝ ԻՔՄ-ի առցանց տեսանելիությունը մեծացնելու միջոցով	*Ծախսեր*	**8304**
6	Արտահերթ ընտրություններ 2021. տեղական դիտորդություն և քաղաքացիների իրավազորում	*Ծախսեր*	**9278**
7	Փաստահենք տեղեկատվության խթանում՝ լրագրողական հետաքննությունների միջոցով	*Ծախսեր*	**19531**
8	Ապատեղեկատվության դեմ պայքար Հայաստանում	*Ծախսեր*	**62096**
			429110